հավելված 1

ՀԱԷԿ-ի աշխատակիցների պարբերական բժշկական քննությունների համար նեղ մասնագետների աշխատանքի ծավալները, տեխնիկական բնութագրերը, անհրաժեշտ լաբորատոր քննությունները, գործիքները և ապարատները.

| № <br><br>№ | Նեղ մասնագետների և ծառայության անվանումը | Աշխատանքի ծավալները և տեխնիկական բնութագրերը | Անհրաժեշտ գործիքները և ում կողմից է տրվում | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | Թերապևտ (հանձնաժողովի նախագահ) | ՀԱԷԿ-ի աշխատակիցների մանրամասն զննում, անամնեզի հավաքում,ճնշաչափում, թոքերի սրտի աշխատանքի ստուգում, գրանցում հիվանդության պատմագրում, սպիրոմետրիա: Հիվանդությունների հայտնաբերման ժամանակ,եթե կան հակացուցումներ տվյալ արտադրամասում աշխատելու համար, գրել տեղափոխման կամ աշխատանքից հանելու համար բժշկական եզրակացության ակտ, որը տրվում է պոլիկլինիկայի կողմից տնօրենի կլոր կնիքով: Պարբերական բժշկական քննությունների ավարտից հետո համաձայն ՀՀ Կառավարության 15.07.2004թ. N 1089-ն որոշման եզրափակիչ ակտի ձևակերպում: | 1. Ճնշաչափ<br>2. Լսափող<br>3. Սպիրոմետր<br>Տրվում է կատարողի կողմից. | Ակտը համաձայնեցվում է ՀԱԷԿ-ի ԲՊԲ վարիչի հետ. |
| 2 | Ակնաբույժ | Տեսողության սրության ստուգում Սիվցևի աղյուսակով, աչքի հատակի ստուգում, ոսպնյակի վիճակի նկարագրություն կատառակտայի վերաբերյալ: Հիվանդությունների հայտնաբերման ժամանակ խորհրդատվություն: | ՀԱԷԿ-ում ԲՊԲ Սիվցևի աղյուսակը և լինզաների հավաքածու կա: կատարողի կողմից պետք է բերվի օֆթալմոսկոպ (շարժական) և աչքի հատակի ճնշման չափման հարմարանքները: | |
| 3 | Քիթ-կոկորդ ականջաբան | Քթի խոռոչի, քթանցքի զննում, ականջի հայելիներով զննում, աուդիոմետրիա, խորհրդատվություն: | 1. Քթի հայելիներ<br>2. Ականջի հայելիներ<br>3. Շպադելներ.<br>4. Աուդիոմետր<br>(տրվում է կատարողի կողմից): | |
| 4 | Նյարդաբան | Աշխատակցի արտաքին զննում, դեֆորմացիաների նկարագրություն, ռեֆլեքսների ստուգում: Հիվանդությունների հայտնաբերման ժամանակ խորհրդատվություն: | Նևրոլոգիական մրճիկ (տրվում է կատարողի կողմից): | |
| 5 | Մաշկա-վեներոլոգ | Մաշկի և տեսանելի լորձաթաղանթների արտաքին զննում | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 5 | Մաշկա-վեներոլոգ | Մաշկի և տեսանելի լորձաթաղանթների արտաքին զննում մաշկային հիվանդությունների հայտնաբերման համար:<br>Սնկային հիվանդություն հայտնաբերելիս կատարել աշխատանքի թույլտվության վերաբերյալ գրառում և տեղափոխման ակտ կազմել հսկվող զոննայից տեղափոխելու համար ժամանակավոր կամ մշտական: | — | |
| 6 | Վիրաբույժ | Աշխատակցի արտաքին զննում, վերջույթների ամբողջականության նկարագրում: Հիվանդության հայտնաբերման ժամանակ ուղղորդում համապատասխան կլինիկաներ, խորհրդատվության: | | |
| 7 | Լաբորատոր քննություններ | ա) Արյան ընդհանուր քննություն լեյկոֆորմուլայով, տրոմբոցիտներով:<br>Անհրաժեշտության ժամանակ արյան մեջ շաքարի որոշում, խոլեստերենի և " C' ռեակտիվ սպիտի որոշում:<br><br>բ) Մեզի ընդհանուր քննություն – անհրաժեշտության ժամանակ: | 1. Միկրոսկոպ 1 հատ<br>2. Առարկայական ապակիներ.<br>3. Ներկանյութեր, ռեակտիվներ արյան և մեզի քննության համար (բերվում է կատարողի կողմից): | |
| 8 | Ֆլյուրոգրաֆիա | ա) Ռենգեն տեխնիկի կողմից ֆլյուրոգրաֆիկ նկարահանում, ժապավենի վերծանում ռեակտիվներով:<br><br>բ) Ռենգենոլոգի կողմից ժապավենների զննում նեգատոսկոպով (պոլիկլինիկայում) և եզրակացության գրառում հիվանդի հիվանդության պատմագրում: | 1. Ֆլյուրոգրաֆիկ ժապավեն<br>2. Երևակիչ (проявитель).<br>3. Փոշեքիմիկատ (ֆիքսաժ) (բերվում է կատարողի կողմից). | |
| 9 | Էլեկտրոսրտագրություն | Տեխնիկի կողմից կատարվում է էլեկտրոսրտագրություն.<br>Եզրակացությունը տրվում է թերապրտի կողմից: | Էլեկտրոսրտագրիչ ապարատ<br>(բերվում է կատարողի կողմից). | |
| 10 | Ուլտրաձայնային հետազոտություն | Կատարվում է ուլտրաձայնային հետազոտող բժշկի կողմից որովայնի խոռոչի, փոքր կոնքի և վահանաձև գեղձի հետազոտում: | Ուլտրաձայնային ապարատ (բերվում է կատարողի կողմից): | |
| 11 | Գինեկոլոգ | Կանանց ներքին զննում, խորհրդատվություն, անհրաժեշտության ժամանակ՝ սոնոգրաֆիկ հետազոտություն: | Զննման համար համապատասխան գործիքներ և ձեռնոցներ (բերվում է կատարողի կողմից): | |

ԲՊԲ վարիչ՝ [signature] Վ. Աբրահամյան

25.11.2016թ.